

– Լաւ, իմ ժամանակս դեռ չէ հասած ուրեմն:

Եւ ամենայն հանդարտութեամբ աս խօսքերն ըսելով, աչքերը լորս կողմը պտտցուց իբրեւ թէ բան մը կը փնտրէր: Աշոտ իւր շարժմունքէն իմանալով փնտրածը՝ շուտ մը քակեց մէջքէն սուրը եւ ներկայացնելով Յովնանու՝

– Թեպէտ սորա տերը միևնչեւ այսօր այնպիսի քաշ մէկը չէ եղեր, որ պատիւ բերէ, բայց իբրեւ բարեկամական յիշատակ խնդրեմ, որ յանձն առնուս գործածել:

– Բագրատունի իշխանի մը սուրը միշտ պատիւ կը բերէ:

Այս խօսքը զրուցեց սուրը կապելով, եւ երբ բերին տուին իրեն իւր նիզակն էլ, ձեռքը կուրծքին գրաւ, մնաս բարեւն ըսաւ, եւ ուղղուի ցաւ դէպի դուռը:

– Ահա երիտասարդ մ'էլ, որ կը խոստանայ, կ'ըսէր ինքնիրեն Յովնան, բայց ի՛նչ օգուտ, իւր սրամտութիւնը կրնա՛յ արգիլել, որ Յայաստան արիւններու մէջ չի թաթխուի, իբրեւ հնձան չի տրորուի: Երթանք, Յովնան, մեր Սասնոյ լեռները, սպասենք ինչ որ վճռուած է, «Բարկութեան, որ գալոց է» եւ յուսանք հաստուած եւ ոչ ի մարդիկ:

Այսպէս Յովնան ինքնիրեն իւր նիզակին՝ վրայ յեց կ'երթար՝ կը շարունակէր իւր յետադարձն անխռով եւ անսասան՝ բայց տխուր վասնզի չի կրցաւ շարժել եկեղեցական խումբը՝ ուսկից ինք յենակէտ մը շինել կը յուսար: